Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԻԶԻ ՓԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

31 դեկտեմբերի 2020թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն	8

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armen
T + 374 10 50 09 64/61

«ԻԶԻ ՓԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցներին.

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը, քաղված են «ԻԶԻ ՓԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության («Ընկերություն») 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություն-ներից:

Մեր կարծիքով կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով, համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ-ներ), որոնք կիրառվել են Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2021թ. հունիսի 21-ի մեր եզրակացությունում:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության

պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է արտահայտել կարծիք, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմնվելով մեր կողմից «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության պատրաստման առաջադրանքներ» Աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810-ին (Վերանայված) համապատասխան իրականացրած ընթացակարգերի վրա:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Նաիրա Ուլունց
Աուդիտի ղեկավար

21 հունիսի 2021թ.

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,804,534	2,525,702
Անավարտ գործարքների գծով ստացվելիք գումարներ	461,726	448,379
Տրամադրված փոխառություններ	4,771	33,426
Հիմնական միջոցներ	553,065	612,849
Ոչ նյութական ակտիվներ	409,214	409,444
Այլ ակտիվներ	364,916	359,570
Ընդամենը ակտիվներ	5,598,226	4,389,370
Պարտավորություններ և սեփական կապիտալ		
Պարտավորություններ		
Վճարվելիք գումարներ	2,683,074	2,547,613
Ներգրաված վարկեր և օվերդրաֆտներ բանկերից	395,225	412,049
Ներգրաված փոխառություններ	49,832	44,085
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	94,972	9,410
Հետաձգված հարկային պարտավորություն	47,292	51,899
Վարձակալության գծով պարտավորություններ	107,956	85,695
Այլ պարտավորություններ	829,450	129,677
	4,207,801	3,280,428
Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	459,598	459,406
Էմիսիոն եկամուտ	124,416	124,416
Վերագնահատման պահուստ	300,184	300,184
Չբաշխված շահույթ	506,227	224,936
	1,390,425	1,108,942
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	5,598,226	4,389,370

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2021թ. հունիսի 21-ին:

Միքայել Գաբրիելյան
Տնօրենի ժ/պ

Արթուր Հովհաննիսյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Մատուցված ծառայություններից եկամուտ	3,897,947	2,831,834
Մատուցված ծառայություններից ծախսեր	(1,440,746)	(981,937)
Այլ եկամուտներ	85,463	88,120
Անձնակազմի գծով ծախսեր	(671,588)	(624,359)
Հիմնական միջոցների մաշվածություն	(189,876)	(178,356)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(7,189)	(12,071)
Վարչական այլ ծախսեր	(988,519)	(790,520)
Գործառնական շահույթ	685,492	332,711
Ֆինանսական եկամուտ	4,711	2,220
Ֆինանսական ծախսեր	(24,158)	(21,133)
Արժեզրկման ծախս	(35,194)	(28,068)
Շահույթ մինչև հարկերը	630,851	285,730
Շահութահարկի գծով ծախս	(124,624)	(58,544)
Տարվա շահույթ	506,227	227,186
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին		
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	7,322
Ընդամենը հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում	-	7,322
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	506,227	234,508

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Կանոնա-դրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Ոչ նյութական ակտիվների վերագնա-հատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	423,298	124,416	292,862	138,949	979,525
Տարվա շահույթ	-	-	-	227,186	227,186
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	7,322	-	7,322
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	7,322	227,186	234,508
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	(141,199)	(141,199)
Կանոնադրական կապիտալի ավելացում	36,108	-	-	-	36,108
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	36,108	-	-	(141,199)	(105,091)
Հաշվեկշիռը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	459,406	124,416	300,184	224,936	1,108,942
Տարվա շահույթ	-	-	-	506,227	506,227
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	506,227	506,227
Ճշգրտում	192	-	-	-	192
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	(224,936)	(224,936)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	192	-	-	(224,936)	(224,744)
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	459,598	124,416	300,184	506,227	1,390,425

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	630,851	285,730
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	197,065	190,427
Հիմնական միջոցների օտարումից վնաս	25,587	10,106
Ֆինանսական ծախսեր	15,209	14,406
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	3,535	(4,773)
Արժեզրկման ծախս	35,194	28,068
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	907,441	523,964
Անավարտ գործարքներ	(30,882)	2,378,680
Այլ ակտիվների փոփոխություն	(1,841)	(5,248)
Բանկերից ներգրավված վարկերի և օվերդրաֆտների փոփոխություն	(16,824)	212,049
Վճարվելիք գումարների և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	845,551	(2,082,345)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	1,703,445	1,027,100
Վճարված շահութահարկ	(43,669)	(90,771)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	1,659,776	936,329
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(120,427)	(183,543)
Փոխառությունների (տրամադրում)/մարում	31,070	(14,347)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(89,357)	(197,890)

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կանոնադրական կապիտալի ավելացում	-	36,108
Վճարված շահաբաժիններ	(224,936)	(141,199)
Վարձակալության գծով պարտավորություններ	(29,412)	(29,483)
Փոխառություններ	-	(36,322)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(254,348)	(170,896)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	1,316,071	567,543
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(735)	174
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(36,504)	(27,703)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներտարվա սկզբում	2,525,702	1,985,688
Դրամական միջոցների և դրանց համարժեքներտարվա վերջում	3,804,534	2,525,702

Ծանոթագրություն 1

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են «ԻԶԻ ՓԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունները, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը և կից ծանոթագրությունը՝ քաղված «ԻԶԻ ՓԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից, պատրաստված են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը՝ կից ծանոթագրություններով, հասանելի է «ԻԶԻ ՓԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ինտերնետային կայքում՝ www.easypay.am: